<<ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/01

հ. Ստեփանավան «18» ապրիլի 2018 թ.

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լիմիներթ>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Խաչատրյանի, որը գործում է ՀՀ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ստեփանավանի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 31.05.2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3900000 (երեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ	<<Լիմիներթ>>ՍՊԸ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1	ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ԱՇԲ բանկ Ստեփանավանի մ/ճ
ՀՀ900252131025	ՀՀ2471400577270010
ՀՎՀՀ 06954104	ՀՎՀՀ07203843
	Տնօրեն Լ.Խաչատրյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված թիվ 2
«18» ապրիլի 2018 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ	Պայմանագրի կնքման օրվանից	31.05.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>>
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ900252131025
ՀՎՀՀ 06954104

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լիմհերթ>>ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ բանկ Ստեփանավանի մ/ճ
ՀՀ2471400577270010
ՀՎՀՀ07203843
Տնօրեն ՝ Լ.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«18 » ապրիլի 2018 թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211225	ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ					3900000	3900000	3900000	3900000	3900000	3900000	3900000	3900000	3900000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>>
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
ՀՀ900252131025
ՀՎՀՀ 06954104

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լիմիերթ>>ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ բանկ Ստեփանավանի մ/ճ
ՀՀ2471400577270010
ՀՎՀՀ07203843
Տնօրեն՝ Լ.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 18»ապրիլ 2018թ. կնքված
ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԱՏԱՐՄԱՆ

Շինարարական աշխատանքներ					
N N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
	<u>ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ</u>				
1	Հատակի առկա մամլագրանիտե և բնական քարե (0.2 մ^2) սալիկների քանդում (ներառյալ ց. ա. հարթեցնող շերտը)	մ^2	20	0,79044	15,8088
2	Առկա շրիշակների ապամոնտաժում	զմ	29	0,296433	8,596557
3	1140x300 մմ չափերով ՊՎՔ լուսամուտագոգերի ապամոնտաժում /2 հատ/	մ^2	0,684	1,3141863	0,898903429
4	1170x300 մմ չափերի ՊՎՔ լուսամուտագոգերի ապամոնտաժում /2 հատ/	մ^2	0,702	1,3141863	0,922558783
5	Բոլոր փայտե դռների ապամոնտաժում	մ^2	3,87	1,1758509	4,550542983
6	ՊՎՔ միջնորմների ապամոնտաժում (ներառյալ ապակեպատ մակերեսներով դռները, խուլ և բացվող փեղկերով լուսամուտները)	մ^2	12	0,8201313	9,8415756

7	Բոլոր չգորգոծ բաց մալուխների ապամոնտաժում	գմ	100	0,098811	9,8811
8	Բոլոր էլեկտրական վարդակների, անջատիչների և բաժանարար տուփերի ապամոնտաժում	հատ	7	0,098811	0,691677
9	Բոլոր լուսատուների ապամոնտաժում	հատ	6	0,2865519	1,7193114
10	Բոլոր պատերի հարդարարական շերտերի ամբողջական քանդում	մ^2	59	0,7707258	45,4728222
11	Առաստաղի հարդարական շերտի ամբողջական քանդում (ներառյալ լուսամուտների բացվածքների վերին շեպույթները)	մ^2	46	1,0078722	46,3621212
12	Բնական քարով երեսպատված պատերի լվացում-մաքրում, ավազահարում	մ^2	7	0,4051251	2,8358757
13	Թուջե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում	հատ	3	0,9584667	2,8754001
14	Բոլոր հին շերտավարագույրների H=1700 (ներառյալ քիվերի) ապամոնտաժում, 4 հատ	գմ	4,68	0,3359574	1,572280632
15	Արտաքին ջեռուցման խողովակների (մետաղական) ապամոնտաժում	գմ	22	0,5138172	11,3039784
16	Շին. աղբի հավաքու, բարձում եւ տեղափոխում 3կմ	տ	4,7	1,4327595	6,73396965
	<u>ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ</u>				
1	Անցքավոր թեթև բետոնե բլոկներով (ամրանավորված,T=100 մմ) դռան բացվածքի փակում	մ^2	1,5	2,7864702	4,1797053
2	ԳԿԹ (T=2x12 մմ) պատերի T=100 մմ կառուցում, ներառյալ ինքնապարուրվող պտուտակները ու ձայնախլացուցիչ	մ^2	11,5	5,8792545	67,61142675

	ռետինները: ԳԿԹ-ն ստաղի երկու կողմից				
3	ԳԿԹ (T=1x12 մմ) պատի կառուցում, առկա միջնորմի վրայից:Պրոֆիլի չափը 20x50, ներառյալ կարգավորող/ամրոցնոց անցքավոր շերտաձողերը, և ինքնապարուրվող պտուտակները, ինչպես նաև ձայնախլացուցիչ ռետինները	$մ^2$	12,3	4,545306	55,9072638
4	Ձայնա և ջերմամեկուսացում հանքային բամբակով T=50մմ բոլոր ԳԿԹ պատերի մեջ	$մ^2$	23,8	0,6521526	15,52123188
5	Արտաքին պատի (T=550 մմ) մեջ օդանցքների խողովակների շուրջ ջերմամեկուսացում, փքվող փչովի նյութով	տեղ	3	0,889299	2,667897
	<u>ԲԱՑՎԱԾՔՆԵՐ</u>				
1	2 հատ 1140x300x20 մմ չափի բազալտե լուսամուտագոգերի տեղադրում	$մ^2$	0,68	10,276344	6,98791392
2	2 հատ 1170x300x20 մմ չափի բազալտե լուսամուտագոգերի տեղադրում	$մ^2$	0,7	10,276344	7,28
	<u>ՀԱՏԱԿՆԵՐ</u>				
1	Հատակի սալապատում (ներառյալ սալիկի սոսնձանյութը), սալիկի չափը 322x322 մմ, տեսակը՝ Angelico Marron Golden 0144040	$մ^2$	21	13,230793	277,8466509
2	Հատակի ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի (T=20-40 մմ) պատրաստում	$մ^2$	21	1,1363265	23,8628565
	<u>ՇՐԻՇԱԿՆԵՐ ԵՎ ՄԱԼՈՒԽԱՏԱՐ ՍԱԿԱՌՆԵՐ</u>				
3	HDPS (բարձր խտության պոլիստերոլ) շրիշակ, չափը՝110x15 մմ: Արտադրող՝ NMC, մոդել՝ FD2: Մանրամասները ըստ գծագրի	գմ	27	1,185732	32,014764
4	20x20 մմ չափերով ալյումինե անկյունակի տեղադրում ներկառուցվող սակառների ակոսը պատրաստելու համար	գմ	27	0,7509636	20,2760172

5	Պատի մեջ ներկառուցվող և վերադիր (դեպի սերվեր հոսանքի մալուխի համար) պլաստիկ սակառներ 16x25 մմ, պլաստիկ կափարիչով	գմ	121	0,5731038	69,3455598
6	20x16 մմ փայտե չորսու շրիշակը պատին ձգելու համար	գմ	27	0,2173842	5,8693734
7	Պտուտակ+դյուբել՝ սակառները, փայտե չորսուն և շրիշակները պատերին ձգելու համար	հատ	45	0,0790488	3,557196
8	Երկկողմանի ինքնակպչուն մոնտաժային ժապավեն սակառների տեղադրման համար	գմ	30	0,296433	8,89299
	ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ				
1	ԳԿԹ (T=9մմ) կախովի առաստաղի կառուցում, ներառյալ ամրացման դետալները	մ^2	45	4,8812634	219,656853
2	Պատերի գիպսոնիտե սվաղում (շաղախը՝ 70% գիպսոնիտ՝ 30% գիպս)	մ^2	42	2,569086	107,901612
3	Պատերի հարդարարական շերտի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում	մ^2	77,3	0,3656007	28,26093411
4	Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, ծեփամածկումով, սպունգով լվացվող, գույները ըստ նախագծի	մ^2	77,3	1,185732	91,6570836
5	Առաստաղի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, սպունգով լվացվող, ծեփամածկումով գույները ըստ նախագծի	մ^2	45,1	1,3141863	59,26980213
6	2800x40x65 մմ չափերով փայտե լամինատե U-աձև երեսապատման դեկորատիվ պատրաստվածքների ամրացում պատի վրա: Լամինատի տեսակը, գույնը, տեքստուրան՝ ըստ Egger H1212, նմուշը՝ համաձայնեցնելով ճարտարապետի հետ: Մանրանասբերը ըստ նախագծի	մ^2	4,78	10,473966	50,06555748
7	1300x40x65 մմ չափերով փայտե լամինատե U-աձև երեսապատման դեկորատիվ պատրաստվածքների ամրացում պատի վրա: Լամինատի տեսակը, գույնը, տեքստուրան՝ ըստ Egger H1212, նմուշը՝ համաձայնեցնելով ճարտարապետի հետ: Մանրանասբերը ըստ նախագծի	մ^2	0,75	10,473966	7,8554745

	ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ				
8	Ø200 մմ-ոց անցքերի բացում 550 մմ հաստությամբ արտաքին պատի մեջ	հատ	3	4,3872084	13,1616252
9	Պոլիպրոպիլենե օդատար հարթ խողովակով, Ø190 մմ	գմ	1,6	5,2765074	8,44241184
10	Օդանցքի շերտավարագույր, 200x200 մմ, ներկել պատի գույնի կամ մուգ մոխրագույն	հատ	3	4,0611321	12,1833963
11	Օդանցքի մետաղական ցանց, Ø200 մմ (ներսի կողմից)	հատ	3	4,0611321	12,1833963
	ՋԵՌՈՒՑՈՒՄ				
1	Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում	էկմ	7,5	0,6620337	4,96525275
2	Ջեռուցման ալյումինե մարտկոցներ h=600 մմ	սեկցիա	30	4,3773273	131,319819
4	Ø25 մմ խողովակ (մետաղապլաստ): Մոնտաժվում է հատակի մեջ, դեպի ջեռուցիչներ բարձրացումը՝ պատի մեջով: Արտաքինից ոչ մի խողոցակ չի երևում: Հիդրավլիկ փորձարկումով	գմ	45	1,4722839	66,2527755
5	Պարուրով դետալներ	հատ	8	0,8991801	7,1934408
6	Առանց պարուրի դետալներ	հատ	32	0,4347684	13,9125888
7	Փականներ Ø25մմ	հատ	8	3,7745802	30,1966416
8	Կախիչներ մարտկոցների համար	հատ	8	0,4742928	3,7943424

9	Ալեկաբոնդ թիթեղի ամրացում պատին, ջեռուցիչների հետնում: Չափը՝ ջեռուցիչի չափից 80 մմ կարճ ամեն կողմից	$մ^2$	2,3	8,8633467	20,38569741
	ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ				
1	Ø30 մմ անցքի բացում միջհարկային ծածկի մեջ: Մեջը տեղադրել մետաղական խողովակ: Մալուխների համար	հատ	3	0,8991801	2,6975403
	Ընդամենը /հազ. դր./				**1663,2446**
	Վերադիր ծախսեր 13.3%				**221,21153**
	Ընդամենը /հազ. դր./				**1884,4561**
	Շահույթ 11%				**207,29017**
	Ընդամենը /հազ. դր./				**2091,7463**

Լուսամուտներ, դռներ, ապակե միջնորմներ

N N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Հակամիջատային ցանցեր 1170x550 մմ չափերի լուսամուտների համար	հատ	2	9,8811	19,7622
2	Հակամիջատային ցանցեր 1140x550 մմ չափերի լուսամուտների համար	հատ	2	9,8811	19,7622
3	880x2190մմ չափերով լուսամուտ, E1000 ալյումինե շրջանակով, առանց ջերմակամրջակի, շրջանակի գույնը՝ PULVER 02690.09006 (էլեկտրոլիզով ներկված), միաշերտ ապակի T=12 մմ, կոփած: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	$մ^2$	1,93	54,34605	104,8878765
4	2240x2385մմ չափերով դուռ-լուսամուտ, E1000 ալյումինե շրջանակով (միայն դուռ-լուսամուտի պարագծով), առանց ջերմակամրջակի, շրջանակի գույնը՝ PULVER 02690.09006 (էլեկտրոլիզով ներկված), միաշերտ ապակի T=12 մմ, կոփած: Ապակին թափանցիկ, անգույն: Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	$մ^2$	5,34	54,34605	290,207907
5	Այդ թվում դռան բռնակ, մետաղական գլանաձև ձող D=35-40 մմ, L=850 մմ, գույնը՝ պողպատ/քրոմ, տեղադրվում է դռան երկու կողմից	կ-տ	1	41,50062	41,50062
6	Այդ թվում բարձրորակ դռան փական, բանալիներով, գույնը՝ պողպատ/քրոմ	կ-տ	1	24,70275	24,70275

7	Այդ թվում դռան չափաբերիչ հատակի մեջ ներկառուցվող, բարձրակարգ:	կ-տ	1	74,10825	74,10825
8	Պարակալներ: L-աձև ալյումինե պրոֆիլ 20x40 մմ, գույնը՝ PULVER 02690.06006 (էլեկտրոլիզով ներկված), սոսնձվում է սիլիկոնով, ներառյալ մոնտաժային ինքնակպչուն առաձգական ժապավենները, մոնտաժային երկկոմպոնենտ սոսինձը: Պարակալների մեկ կողմը տեղադրվում է պատի և դռան շրջանակի արանքում: Պարակալները տեղադրվում են ամբողջ պարագծով երկու երեսից	գմ	30	2,371464	71,14392
9	Պոլիմերային ինքնակպչուն թաղանթ (օրակալ) ապակե միջնորմի համար: Փայլատ, սպիտակ, լուսաթափանց, ողորկ մակերևույթով	մ^2	5	6,620337	33,101685
10	Տրանսպորտային ծախսեր		1	88,9299	88,9299
	Ընդամենը /հազ. դր./				**768,107309**
	Վերադիր ծախսեր				
	Ընդամենը /հազ. դր./				**768,107309**
	Շահույթ				
	Ընդամենը /հազ. դր./				**768,107309**

Անջատիչներ, վարդակներ, ապահովիչներ, մալուխներ

N N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/ դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	1 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	5	0,0889299	0,4446495
2	2 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	3	0,1877409	0,5632227
3	4 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	5	0,3359574	1,679787
4	1 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	5	0,1877409	0,9387045
5	2 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	3	0,3260763	0,9782289

6	4 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	5	1,1264454	5,632227
7	Էլեկտրական ներկառուցվող վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	23	1,0473966	24,0901218
8	2 տեղանոց էլեկտրական վերադիր վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով, 1 հատը տեղադրվում է սերվերի սենյակում	հատ	6	1,0473966	6,2843796
9	1 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	1	4,4860194	4,4860194
10	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	4	5,4247239	21,6988956
11	RJ-45 + RJ-11 տիպի (համակարգչային ցանց + հեռախոս) վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	2	4,0117266	8,0234532
12	Անջատիչ երկու ստեղնով	հատ	1	2,470275	2,470275
13	Էլեկտրական շղթայի ավտոմատների ներկառուցվող պլաստիկ արկղ, 12 մոդուլի համար: Legrand, ABB կամ համարժեք	հատ	1	13,695205	13,6952046
14	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, երկբևեռ, 63 A, C դաս, 6kA: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության 1. Խումբ 3 2. խումբ 1, 4, 5	հատ	2	8,2309563	16,4619126
15	ТХЗ УЗО, 63 Ա, 220 Վ 1. Խումբ 3 2. խումբ 1, 4, 5	հատ	2	13,359247	26,7184944
16	ТХЗ УЗО, 10 Ա, 220 Վ 1. Խումբ 2	հատ	1	1,8675279	1,8675279
17	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХЗ, 10 Ա, C դաս,երկբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 2	հատ	1	3,063141	3,063141

18	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 63 Ա, C դաս, երկբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 3	հատ	1	3,5374338	3,5374338
19	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 10 Ա, B դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 4	հատ	1	3,2311197	3,2311197
20	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, ТХ3, 6 Ա, B դաս, միաբևեռ: Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության Խումբ 5	հատ	1	3,5670771	3,5670771
21	Խրամուղու քանդում և հետլիցք հողանցման կառուցման համար	$մ^3$	7	3,0829032	21,5803224
22	50x50x5 մմ, L=2.5 մ, պողպատե անկյունակների ուղղաձիգ տեղադրում հողի մեջ, հողանցման համար	հատ	4	5,0492421	20,1969684
23	Պողպատե շերտաձող —40x4, հողանցման համար	գմ	1	1,0177533	1,0177533
24	Պողպատե շերտաձող —40x4, խրամուղում, հողանցման համար	գմ	11	0,7015581	7,7171391
25	Հողանցման ալյումինե հաղորդալարի անցկացում, 1x50$մմ^2$ հատվածքով	գմ	20	0,8102502	16,205004
26	Էկզոթերմիկ եռակցում հողանցման համար	կետ	4	0,197622	0,790488
27	Պոլիէթիլենային խողովակ Ø50 մմ, դրսից դեպի ապահովիչների տուփ հողանցման մալուխի համար	գմ	17	0,7707258	13,1023386
28	ՊՎՔ խողովակի անկյունակ Ø50 մմ, տեղադրվում է նախորդի ծայրերին	հատ	3	0,5434605	1,6303815
29	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x6 $մմ^2$	գմ	3	1,1066832	3,3200496

	Էլ. վահանից մինչև ՔՍԳ-ի ավտոմատների տուփ				
30	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2.5 մմ^2 Խմբեր 1, 2, 3 և կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	103	0,5829849	60,0474447
31	Էլ. հոսանքի պղձե մալուխ, 3x1.5 մմ^2, ջիղերը իրար կողք (տափակ) Խմբեր 4, 5	գմ	52	0,395244	20,552688
32	Էլ. հոսանքի պղձե մալուխ, 3x1 մմ^2, թափանցիկ պաշտպանիչ պատյանով (լուսատուների համար) Խումբ 4	գմ	8	0,395244	3,161952
33	Ծալքավոր ճկուն պլաստիկ խողովակ, Ø20 մմ, մալուխների մոնտաժման համար, մոխրագույն Դեպի RJ-11 ու RJ-45 վարդակներ (պատերի մեջ, սեղանների դիմային պանելի ներսի կողմից)	գմ	200	0,3853629	77,07258
34	Նախորդի պլաստիկ ամրակներ և ինքնապարուրող պտուտակներ (Lmax=18մմ)	հատ	10	0,0197622	0,197622
35	Գնված լուսատուների տեղադրում	հատ	8	1,5216894	12,1735152
	Ընդամենը /հազ. դր./				**392,03264**
	Վերադիր ծախսեր 13.3%				**52,140341**
	Ընդամենը /հազ. դր./				**444,17298**
	Շահույթ 11%				**48,859028**
	Սարքավորումներ				**16,16548**
	Ընդամենը /հազ. դր./				**509,19749**

Անվտանգության համակարգեր

N N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Ղեկավարման վահանակ	հատ	1	77,764257	77,764257
2	Ծխի դետեկտոր	հատ	1	7,0748676	7,0748676

3	Վթարային մարտկոց: Վթարային մարտկոց (7-12 Ա): Մատրիքս մոդել, Պիրոնիքս ֆիրմայի արտադրության կամ տեխնիկապես համարժեք: Մոդուլներ ավելացնելու հնարավորությամբ	հատ	1	10,69135	10,6913502
4	Շարժման դետեկտոր՝ 360 աստիճանի մոդել	հատ	1	6,2646174	6,2646174
5	Դռան СМК	հատ	1	0,8201313	0,8201313
6	Ներսի ազդարարիչ	հատ	1	4,5255438	4,5255438
7	Դրսի ազդարարիչ	հատ	1	36,639119	36,6391188
8	Մալուխ	զմ	50	0,2865519	14,327595
9	Կրակմարիչ, 750-1000 գրամ, CO_2-ով, ներառյալ կախիչները	հատ	3	5,335794	16,007382
10	Տրանսպորտային ծախսեր		1	9,8811	9,8811
	Ընդամենը /հազ. դր./				**75,00743**
	Վերադիր ծախսեր 13.3%				**9,9759882**
	Ընդամենը /հազ. դր./				**84,983418**
	Շահույթ 11%				**9,348176**
	Սարքավորումներ				**108,98853**
	Ընդամենը /հազ. դր./				**203,32013**

Լուսատուներ

N N	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	3	4	5	6	16
1	Կախովի լուսատու 950x150x140 մմ չափերի, 3x18Վտ LED T5 ձողային լամպերի համար: Առաստաղից կախելու բոլոր	հատ	8	28,250065	226,0005192

	պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Հողանցումով: Պատրաստվում է նախագծով տրված գծագրին համապատասխան				
2	Էներգաարդյունավետ LED լամպ, ձողային, L=900 մմ, 18 Վտ, 6000K, T5, 1100 Լյումեն, առանց տրանսֆորմատորի անհրաժեշտության	հատ	24	3,0137355	72,329652
3	Տրանսպորտային ծախսեր		1	29,3	29,3
	Ընդամենը /հազ. դր./				327,63017
	Վերադիր ծախսեր				
	Ընդամենը /հազ. դր./				327,63017
	Շահույթ				
	Ընդամենը /հազ. դր./				327,63017

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>>
համայնքային կառավարչական հիմնարկ
հ.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
ՀՀ900252131025
ՀՎՀՀ 06954104

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Լիմհերթ>>ՍՊԸ
ՀՀ Լոռու մարզ ք.Ստեփանավան Ռաֆֆի 12
ԱՇԲ բանկ Ստեփանավանի մ/ճ
ՀՀ2471400577270010
ՀՎՀՀ07203843
Տնօրեն՝ Լ.Խաչատրյան

/ստորագրություն/

Կ.Տ